# ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՊԻՏ ՃՆՇՈՒՄ

(«ՊՐԱՎԴԱ»-Ի ՅԵՐԵՎԱՆԻ ԹՂԹԱԿՑԻՑ)

Վեց որ շարունակվեց Յերևանի կոնսերվի գործարանի հաշվետու-ընտրական ժողովը: Ժողովում միանգամայն անսպասելի կերպով յերևացին մի քանի պատասխանատու աշխատողներ— կուսակցության քաղկոմի քարտուղար ընկեր Դանիելյանը, Ստալինյան ռայկոմի քարտուղար ընկեր Քանանովը, Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի հրահանգիչ ընկեր Ցեղիկյանը, քաղկոմի կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի բաժնի վարիչ ընկեր Հարությունյանը, ռայկոմի աշխատակից ընկեր Բալասանյանը, ռայկոմի հրահանգիչներ ընկերներ Մանուկյանն ու Մանդատարյանը և Ստալինյան ռայխորհրդի նախագահ ընկեր Մարտիրոսյանը:

Ժողովում ծավալված մտքերի փոխանակությունը բացահայտեց գործարանում յեղած կամայականություն, վարչարարություն և ինքնաքննադատության ճնշման մթնոլորտ: Կուսակցական կոմիտեյի քարտուղար ընկեր Բունիաթյանը գործարանի դիրեկտոր ընկեր Մելիքյանի հետ միասին տառացիորեն տեռորի յեն յենթարկած յեղել ամբողջ գործարանային կուսակցական կազմակերպությունը: Բունիաթյանն իմացել է ներգործման գերադանցապես սոսկ մի մեթոդ— կուսատոմսից զրկելը: Անօրինական կերպով վերցվել են ընկերներ Գասպարյանի, Հակոբյանի, Գևորգյանի, Այոյանի և շատ ուրիշների կուսակցական տոմսերը: Յուրաքանչյուր քննադատողի ճակատին իբրև կանոն, փակցվելիս է յեղել հակահեղափոխականի պիտակ: Վոչ ցանկալի մարդկանց նկատմամբ գործադրվելիս է յեղել կամ կաշառման, կամ թե վախեցնելու նրբին սիստեմը: Բանն այնտեղ է հասել, վոր աշխատավոր Շահնազարյանին արգելվել է գործարանում պարզաբանել Համ. Կ (բ) Կ Կենտկոմի Պլենումի վորոշումները:

Կարելի յեր յենթադրել, թե շատ կուսակցական աշխատողների ներկայությունը ժողովում բացատրվում է քաղաքում յեղած կուսակցական անբարենպաստ տեղամասի համար ունեցած պատասխանատվության գիտակցումով, ընտրությունների նկատմամբ ղեկավարությունն ապահովելու ցանկությամբ: Սակայն այդպիսի յենթադրությունը սխալ դուրս յեկավ: Ժողովի առաջին իսկ որը Յերևանի քաղկոմի քարտուղար ընկեր Դանիելյանը հասկացնել տվեց իր ժողովի գալու պատճառը: Կոպիտ ռեպլիկաներով նա փորձում եր կասեցնել ինքնաքննադատության ամեն մի ցանկություն: Հաջորդ որը քաղկոմի քարտուղարի «գիծը» շարունակեց Ստալինյան ռայկոմի քարտուղար ընկեր Քանանովը: Նա հայտարարեց.

— Բունիաթյանը կուսակցական տոմսերը վերցնում եր ժամանակավորապես, բայց յեթե յես այստեղ կատարեյի կուսփաստաթղթերի փոխանակումը, ապա ձեզանից, այստեղ ներկա գտնվողներից շատերին յես ընդմիշտ կզրկեյի կուսակցական տոմսից:

Յերբ ի պատասխան այդ զայրացուցիչ հայտարարության բարձրացավ բողոքի աղմուկ, ռայկոմի քարտուղար Կանանովն սպառնաց, թե՝

— Յես կառաջարկեմ անմիջապես դուրս անել յուրաքանչյուրին, ով ռեպլիկա կարձակի և կխանգարի լռությունը:

Կուսակցական կոմիտեյի ընտրություններից մեկ որ առաջ ժողովում հրապարակվեց Յերևանի Քաղկոմի վորոշումը, վորի նպատակն եր սքողել գործարանում ստեղծված կամայականության աղաղակող իրադրությունը: Վորոշման յեզրափակիչ մասում մատնանշվում եր, թե քաղկոմը վորոշել է կուսակցական կոմիտեյի քարտուղար Բունիաթյանին ուղարկել Մոսկվա սովորելու:

Սկսվեցին ընտրությունները: Քաղկոմն առաջադրեց կուսակցական կոմիտեյի կազմի մեջ ընտրել Քաղկոմի դպրոցական բաժնի վարիչ Հրանուշ Դավթյանին, նկատի ունենալով այնուհետև նրան առաջադրել կուսկոմիտեյի քարտուղար:

Պատմելով իր կենսագրությունը, Դավթյանը գործարանի կուսակցական կազմակերպությունից թաքցրեց, վոր իր քույրը, վորի հետ Դավթյանն ապրելիս է յեղել միևնույն բնակարանում, խորհրդային դատարանի կողմից դատապարտված է Յերևանում ընդհատակյա մենշևիկյան-նացիոնալիստական կազմակերպության մեջ հակահեղափոխական աշխատանք կատարելու համար: Դավթյանը ժողովին չհայտնեց նաև այն մասին, վոր նրա ամուսին Յենդիբարյանը կուսակցությունից թաքցրել է իր տրոցկիստական անցյալը: Իսկ Քաղկոմը հիանալի տեղյակ լինելով այդ բոլոր փաստերին, նույնպես իրազեկ չդարձրեց այդ մասին կուսակցական ժողովին:

Քաղկոմի առաջադրության հետևանքով մոլորության մեջ ընկած՝ գործարանի կոմունիստները թեր քվեարկեցին այնպիսի մի մարդու, վորը լուրջ ստուգման կարիք է զգում: Հրանուշ Դավթյանն ընտրվեց նաև կուսակցական կոմիտեյի քարտուղար:

Մ. ԿՈՏԼՅԱՐՈՎ

(ՏՊԱԳՐՎԱԾ Ե «ՊՐԱՎԴԱ»-Ի ՄԱՅԻՍԻ 7-Ի ՀԱՄԱՐՈՒՄ):